

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՔԱՆՑՈՒԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ
ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

<<ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ>> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն 3

1.2 Հապավումներ..... 3

1.1 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը 4

1.1.1 *Քարի արտադրամասի ինժեներական լուծումներ* 8

2 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ..... 9

2.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 9

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 26

2.1 Ռիսկերի գնահատում..... 26

2.2 Արտանետումների աղբյուրները 26

2.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 26

2.3.1 *Մթնոլորտային օդ*..... 26

2.3.2 *Ջրային ռեսուրսներ*..... 27

2.3.3 *Հողային ռեսուրսներ* 27

2.3.4. Թափոնների կառավարում 27

2.3.5. Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը 28

2.3.5. *Աղմուկ*..... 29

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ..... 29

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 30

ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ..... 32

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ [20](#)

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... [21](#)

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	<<ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ>> ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ վարչական շրջան 5-րդ փողոց 174 տուն
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ վարչական շրջան 5-րդ փողոց 174 տուն
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Գեղարքունիքի մարզ Մարտունի խոշորացված համայնքի Գեղհովիտ վարչական շրջան

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.1 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է իրականացնել ոչ մետաղական հանքանյութի վերամշակում արտադրելով երեսպատման քարեր, եզրաքարեր, գերեզմանաքարեր և այլ շինանյութ ըստ պատվերի:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Վերամշակման արտադրամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Սթնուղորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասագերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին» N16 արձանագրային որոշում,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

17. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

18. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

19. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

20. « կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին « կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,

21. « բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին « կառավարության 29.01.2010թ.- ի N72-Ն որոշում,

22. « կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

23. «կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

24. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Համաձայն պատվիրատուի պատվերի ձեռք է բերվում համապատասխան հանքաքար և ընկերության տարածքում իրականացվում դրա վերամշակման աշխատանքեր: Հանքաքարի վերամշակման նպատակով տարածքում տեղադրված է 2 հատ էլեկտրական տելֆեր և երկու քարի կտրման սոցներ:

Քարի կտրումը իրականացվում է ջրի շթի տակ՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով: Առկա է ավազան, որտեղ կուտակվում է ձնհալի և անձրևաջրերը և շրջանառու կերպով տրվում կտրող հաստոցին: Ավազանից քարի փոշու նստվածքը պարբերաբար հեռացվում է և կուտակվում, որից հետո վաճառվում է ճանապարհաշինարարական ընկերություններին:

Հանքանյութի վերամշակման արդյունքում առաջացող հանքաքարի կտորները նույնպես հավաքվում են, կուտակվում և վաճառվում ճանապարհաշինարարական ընկերություններին:

Ընկերությունում աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով նախատեսված է սանհանգույց, լվացարան, հանգստի սենյակ:

Ընկերության տարածքը ցանկապատված է և բարեկարգված:

1.1.1 Քարի արտադրամասի ինժեներական լուծումներ

Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ բաժանորդ:

Ընկերության տարածքը գազաֆիկացված չէ:

Աշխատողների կոմունալ կենցաղային պահանջները ապահովելու համար ջուրը բերվում է պայմանագրային հիմունքներով, իսկ ջրահեռացման համար նախատեսված է սեպտիկ հոր, որտեղից ըստ լցվածության աստիճանի պայմանագրային հիմունքներով կտեղափխվի կոյուղու դիտահոր:

1.1.2 Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ՄՊԳ)


Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, բնական քարերի վերամշակման արտադրամասերի համար սահմանված է 50 մ ՄՊԳ, որը տվյալ պարագայում ապահովված է:

2 ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության համար առաջարկվող տարածքը գտնվում է Մարտունի խոշորացված համայնքի Գեղհովիտ վարչական շրջանի տարածքում M10 միջպետական ճանապարհի հարևանությամբ մոտ 30մ: Տարածքը կառուցապատված է և ժամանակի ընթացքում ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Գործունեության տարածքը գտնվում է Գեղհովիտ վարչական շրջանի ծայրամասում, հարևանությամբ 200մ հեռավորության վրա գտնվում է մոտակա բնակելի տունը, 150-220 մետր հեռավորության վրա անասնապահական համալիրի ենթակառուցվածքները:

Արտադրամասի տեղադիրքը



Կլիմայական պայմաններ

Մարտունի քաղաքի տարածքը գտնվում է շինարարակլիմայական ցուրտ գոտում (ՀՀՇՆ II-7.01.96) գով ամառով, ցուրտ ձմեռով: Արեգակնային ճառագայթման մեծ քանակը (2500-2800 ժամ/տարի) պայմանավորված է տարածքի պարփակվածությամբ, Սևանա լճի հատկությամբ՝ մեղմացնելու ջերմաստիճանը (ամռանը հավաքում է ջերմությունը, ձմեռը տաքացնում է օդը՝ հիմնականում ավաճեճ շերտում):

Ձմեռը չափավոր ցուրտ է, արևոտ, խորը ձյան ծածակությոճ: Կայուն ձյան շերտ առաջանում է ամեն տարի: Հունվար ամսին ձնհալքային եղանակները կազմում են 49 %, որից արևայինը՝ 33 %: Ձմռան ամիսներին բնորոշ է ուժեղ սառնամանիքային եղանակների (միջին օրական ջերմաստիճանը –12.50) շատ փոքր քանակը (2-3 օր): Ձմեռային եղանակները կայուն են: Ձմեռը շարունակվում է մինչև մարտի 3-րդ տասնօրյակը: Գարունը կարճ է, չափավոր ցուրտ: Գարնան երկրորդ կեսը ավելի տաք է առաջինից: Մթնոլորտային տեղումները առավելագույնի են հասնում մայիսի վերջին, միջին օրական ջերմաստիճանը բարձրանում է 150–ից: Ամառը համեմատաբար տաք է, գերակշռում են արևոտ, չափավոր խոնավ եղանակները, փոքրանում է ամպամած օրերի թիվը: Ամառվա ամիսներին բացակայում են ‘շատ շոգ-շատ չոր’ տիպի եղանակները (միջին օրական ջերմաստիճանը բարձր է 22.50-ից), գերակշռում են արևոտ եղանակները: Հուլիս-օգոստոս ամիսների միջին ջերմաստիճանը՝ 15.80 C:

Աշունը չափավոր ցուրտ է, առաջին կեսը՝ չոր, արևոտ եղանակներով, երկրորդ կեսը՝ ցուրտ, փոփոխական եղանակների գերակշռությամբ:

Ստորև բերված աղյուսակները բնութագրում են քաղաքի կլիմայական ռեժիմն ըստ ‘Մարտունի’ օդերևութաբանական կայանի տվյալների, բացարձակ բարձրությունը 1945 մ (ՀՀՇՆ II-7-01-96):

1 Օղի ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Միջին ամսական, ըստ ամիսների												միջին տարեկան	բացարձակ նվազագույնը	բացարձակ առավելագույնը
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Մարտունի	5.7	-5.8	-1.7	4.8	9.0	12.9	16.0	15.8	12.8	7.5	2.4	-2.9	5.4	-32	34

2 Օղի խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օղի հարաբերական խոնավությունն (%) ըստ ամիսների												միջին տարեկան	միջին ամսական ժ.13-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամիսը	ձմռան ամիսը
Մարտունի	68	69	70	66	67	69	71	70	66	62	65	67	68	63	59

3 Մթնոլորտային տեղումները և ձյունածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Գրեքական	Ձյան ծածկույթը		
	ըստ ամիսների													միջին ամսական քանակություն	միջին թիվը	ձյան քանակությունը (մմ)
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Մարտունի	24/ 25	30/ 34	44/ 30	56/ 39	71/ 41	70/ 69	45/ 42	29/ 37	32/ 59	41/ 37	36/ 84	23/ 36	501 /84	75	103	116

4 Քամի

Մարտունի	Բնակավայրի անվանումը Մթնոլորտային ճնշումը ԳՊԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը, % / քամու միջին արագությունը մ/վրկ								անհողմությունների կրկնելիությունը,%	քամու միջին ամսական արագ. (մ/վրկ)	քամու միջին տարեկան արագ. (մ/վրկ)	ուժեղ քամիներով (215 մ/վրկ) օրերի քանակը	Քամու հաշվարկային արագ.(մ/վրկ),որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում		
			հս.	հս.արևմտ.	արևմ.	հր.արևմտ.	հվ.	հր.արևմ.	արմ.	հս.արևմ.					20	50	100
			ըստ ուղղությունների														
508	I	2/1.7	1/1.8	1/1.7	գ.5	22/4.0	70/4.9	2/2.7	գ.3	18	3.8	2.7	31	32	45	51	
		11/2.0	5/2.0	2/1.8	2/2.5	17/3.6	53/4.1	5/2.5	5/2.1	34	2.8						
		38/2.1	13/2.2	3/1.8	0/1.5	3/1.9	25/2.2	4/1.9	14/2.2	48	1.5						
		9/1.8	5/1.8	1/1.6	գ.1	14/2.7	65/3.2	3/2.2	2/1.9	23	2.7						

2.2 Ջրային ռեսուրսներ

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Այս առանձնահատկություններով է պայմանավորված որոշ տեղամասերում միայն գրունտային ջրերի տարածվածությունը, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացխաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ոռոգման նպատակով հորերի ջրածախսի ավելացմամբ: Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության 23 տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան: Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և

վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:




Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա–Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան–Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թ.):

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Արդյունքում՝ 2003-2010թթ. լճի մակարդակը բարձրացել է 384 սմ, ինչը նախադրյալներ է ստեղծել ջրաէկոհամակարգի և կենսաբազմազանության վերականգնման համար: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգտագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմազան համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետությունից միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության «ՀԿՄ» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքի՝



2.2 Գեոմորֆոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները

Մարտունի խոշորացված համայնքի գեոմորֆոլոգիական պայմանները բարենպաստ են: Համայնքի տարածքը հիմնականում իրենից ներկայացնում է ակումուլյատիվ հարթավայր՝ լճային և պրոլյուվիալ նստվածքների մեծ հզորություն ունեցող շերտով: Տարածքը կտրտված է ձորակներով, հեղեղատներով:

Համայնքի հիմնական մասը (ակումուլյատիվ հարթավայրը) ներկայացված է ավազակավերով, կավավազներով, ճալաքարային-կոպճային գրունտներով, իսկ հարավային մասը՝ անդեզիտադացիտներով, դացիտներով:

Համայնքի տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարենպաստ են: Տարածքի սեյսմատեկտոնական պայմանների գնահատման ընթացքում խիստ կարևորվում է ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի ելակետային արժեքների որոշումը, որը համայնքի տարածքում տատանվում է 7 բալլից մինչև 8.5 բալլ:

Տարածքը հարթ է, քիչ թեքություն ունի դեպի Սևանա լիճը: Տարածքը հիմնականում ներկայացված է խճա-գլաքարային նստվածքներով:

2.3 Կենսաբազմազանություն

Տարածքը զուրկ է բուսածածկույթից, բնութագրվում է տարածքի բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով՝ տարախոտահացազգի տեսակներով: Արտադրամասի տարածքում, ինչպես և հարակից տարածքներում ուրբանացված լինելու պատճառով բացակայում են կենսաբազմազանության տեսակները, էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ: Քանի որ հարակից տարածքները կառուցապատված են և օգտագործվում են տարբեր նպատակներով, դիտարկվող տարածքում կենդանիների միգրացիոն ուղիներ չեն կարող լինել:

Դիտարկվող տարածաշրջանը պատկանում է Սևանի ֆլորիստական շրջանին: Սևանա լճի ջրհավաք ավազանն ունի ինքնատիպ և հարուստ կենսաբազմազանություն: Կարգաբանական առումով հետևյալն է, կաթնասուններ՝ 34 տեսակ, թռչուններ՝ 267, երկկենցաղներ՝ 3, սողուններ՝ 17, ձկներ՝ 9: Սևանի ավազանում հանդիպող 267 տեսակի թռչուններից 48-ը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակազուխ բադը /սավկան/, չեն բնադրում լճի տարածքում: 1996թ տվյալներով տարածքում հանդիպող բնադրող թռչուններն են սև փարփարը, կոնչան բադը և հայկական որորը: Վերջինս գրանցված է Կարմիր գրքում՝ որպես սահմանափակ արեալ և առավել խոցելի բնադրավայր ունեցող տարատեսակ:

Սողուններից հանդիպում են սպիտակավոր մողեսը, նաիրյան մողեսը, Ռոստոմ Բեկովի մողեսը, հայկական մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը:

Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագործը և փոքրասիական գորտը:

Ձկներից գրանցված են Սևանի իշխանը՝ իր 4 ենթատեսակներով, սիգը, Սևանի բեղլուն, կողակը և լճածածանը:

Բուսական աշխարհը ներկայացված է միջին և բարձր լեռնային տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով:

Սևանի ավազանի տարածքում հայտնաբերված են 1600 բարձրակարգ բուսատեսակներ, որոնցից 94-ը ծառեր և թփեր:

Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծոխուրի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ողնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

2.4 Պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ

հուշարձան	հավելյալ նշումներ
Ամրոց «Ալբերդ»	գետի ձախ ափին
Ամրոց «Ջոջ կող»	գետի աջ ափին
Դամբարանադաշտ	
Գերեզմանոց	«Կումբեզ» վայրում տարածքում պահպանվում են արաբատառ արձանագրությամբ տապանաքարեր
Գերեզմանոց	«Քարվանսարա» ամառային արոտատեղի հվ եզրին
Գերեզմանոց	
Խաչքար	ընկած գետինին
Խաչքար	ցածր պատվանդանին, արձանագիր
Խաչքար	պահպանվել է միայն վերնամասը՝, արձանագիր
Գլխատուն	Պարույր Նալբանդյանի տնամերձում
Գյուղատեղի	«Կազովնու հովիկներ» վայրում
Գյուղատեղի «Բոզոյի խրբեք»	
Եկեղեցի	հս մասում, ավերակ

հուշարձան	հավելյալ նշումներ
Խաչքար	եկեղեցու ավերակներից հվ
Եկեղեցի Սբ. Գևորգ	վրկնգ՝ 1873 թ.
Խաչքար	ագուցված հվ պատին, արտաքուստ
Խաչքար	հս ավանդատան պատին
Խաչքար	ագուցված խորանում
Խաչքար	ագուցված հվ պատին, արտաքուստ, թվակիր
Խաչքար	ագուցված հվ պատին, արտաքուստ
Խաչքար	ագուցված մկրտարանի խորշում, արձանագիր
Տապանաքար Գրիգորի	ագուցված հվ պատին, ներքուստ
Տապանաքար Միրզաբեկի	ագուցված ամ պատին, կրում է տարբեր ժամանակների 3 արձանագրություն
Տապանաքար	եկեղեցու ներսում, արձանագիր
Գերեզմանոց	եկեղեցու շուրջը 1984 թ. տարածքում կատարվել են բարեկարգման և խաչքարերի ամրացման աշխատանքներ
Խաչքար	եկեղեցու հվ պատի մոտ, ընկած գետնին
Խաչքար	հվ-աե կողմում, ընկած գետնին, ստորին մասը կոտրված
Խաչքար	եկեղեցուց 25 մ աե, ընկած գետնին
Խաչքար	հվ-աե կողմում, ընկած գետնին
Խաչքար	եկեղեցուց 25 մ հվ, կանգնեցված գետնին, վերին աջ անկյունը՝ կոտրված
Խաչքար Մաղաքի	եկեղեցուց 7 մ հվ, կանգնեցված գետնին, վերնամասը՝ կոտրված
Խաչքար	եկեղեցուց 20 մ հվ, կանգնեցված գետնին, երկատված
Խաչքար	եկեղեցուց 15 մ հվ, կանգնեցված գետնին

հուշարձան	հավելյալ նշումներ
Խաչքար	եկեղեցուց 15 մ հվ-աե, կանգնեցված գետնին
Խաչքար	եկեղեցուց 25 մ հվ, կանգնեցված գետնին, թվակիր
Խաչքար Սուրբիաս աղի	եկեղեցու հվ մուտքի մոտ, կանգնեցված գետնին
Խաչքար Եղիի և ծնողաց	եկեղեցուց 15 մ հվ, շարքով կանգնած 4 խաչքարերից ձախից 2-րդը
Խաչքար Շահավարի	եկեղեցուց 7 մ հվ
Խաչքար Միրզի	եկեղեցուց 5 մ հվ, կանգնեցված գետնին կազմող՝ Ակոբ (ենթադրաբար)
Խաչքար	հս-ամ եզրին, կանգնեցված գետնին
Խաչքար Խասմելիքի	եկեղեցուց 6 մ հվ, կանգնեցված գետնին
Խաչքար Զաքարի և Նաների	եկեղեցուց 25 մ հվ-աե, պատվանդանին կազմող՝ Պալասան
Տապանաքար Կոսիայի	եկեղեցուց 3 մ ամ
Տապանաքար Փանոսի	հվ կողմում
Տապանաքար Մեհրաբի	եկեղեցուց 7 մ հվ
Տապանաքար Սուրբիաս աղի	եկեղեցու հվ մուտքի մոտ
Տապանաքար Մուսեսի	եկեղեցու հվ մուտքի մոտ
Տապանաքար Գրիգորի	եկեղեցուց 3 մ հվ
Տապանաքար ջուղեցի Ատոմի	հվ-աե կողմում
Տապանաքար Բարխուդարի	եկեղեցուց 10 մ հվ
Տապանաքար Թումասի	հվ կողմում
Տապանաքար	հվ-աե կողմում
Տապանաքար	եկեղեցուց 5 մ հվ-աե
Տապանաքար	եկեղեցուց 10 մ հվ

հուշարձան	հավելյալ նշումներ
Տապանաքար	հս-ամ եզրին
Տապանաքար	եկեղեցու մուտքի առջև, արձանագիր
Տապանաքար Մարեանի	եկեղեցուց 1 մ աե
Տապանաքար	աե կողմում
Տապանաքար	եկեղեցուց 5 մ աե
Տապանաքար	եկեղեցուց 15 մ հվ
Տապանաքար	եկեղեցուց 15 մ հվ
Տապանաքար	եկեղեցուց 15 մ հվ
Տապանաքար Սարգսի	հս կողմում
Տապանաքար	եկեղեցուց 5 մ հվ
Տապանաքար Սիմեոնի, Հուրիխանի և Խանսուլթանի	եկեղեցուց 10 մ հվ-աե
Տապանաքար Շարբաթի	եկեղեցուց 25 մ հվ-աե
Տապանաքար Շահնավորի	եկեղեցուց 10 մ հվ-աե
Տապանաքար Սարուխանի և Ղարայիսանի	եկեղեցուց 8 մ հվ
Տապանաքար Թամուրի	եկեղեցուց 12 մ հվ-աե
Տապանաքար Ալեքսանի	եկեղեցուց 25 մ հվ-աե
Տապանաքար Խանում աղի	եկեղեցուց 10 մ հվ-աե
Տապանաքար Մոնթպաղի	եկեղեցուց 10 մ հվ-աե
Տապանաքար Ավանի	եկեղեցուց 25 մ հվ-աե
Տապանաքար Սարգսի	հվ-աե կողմում
Տապանաքար Էլջիի	հվ-աե կողմում

հուշարձան	հավելյալ նշումներ
Տապանաքար Բալասանի	եկեղեցուց 15 մ հվ-ան
Տապանաքար Ենգիբարի	եկեղեցուց 15 մ ան
Տապանաքար Տկարի	եկեղեցուց 25 մ հվ-ան
Տապանաքար Թիլխանի	եկեղեցուց 25 մ հվ-ան
Տապանաքար	հվ-ան կողմում
Տապանաքար Խանումի	եկեղեցուց 10 մ հվ
Տապանաքար Էվազի	եկեղեցուց 30 մ հվ-ան
Տապանաքար Էլչիպեկի	եկեղեցուց 10 մ հվ
Տապանաքար Եղիսաբեթի	եկեղեցուց 40 մ հվ-ան
Տապանաքար Մելիքբեկի	եկեղեցուց 5 մ հվ-ան
Տապանաքար Ղուկասի	եկեղեցուց 40 մ հվ-ան
Տապանաքար Միրումի	եկեղեցուց 40 մ հվ-ան
Տապանաքար	եկեղեցուց 40 մ ան, արձանագիր
Տապանաքար Արզուի	հվ եզրին
Տապանաքար Շահնազարի	եկեղեցուց 25 մ ան
Տապանաքար Զաքարայի	եկեղեցուց 25 մ հվ-ան
Տապանաքար Նաների	եկեղեցուց 25 մ հվ-ան
Տապանաքար Սանտուխտի	եկեղեցուց 25 մ հվ-ան
Տապանաքար Հուրիխանի	եկեղեցուց 15 մ հվ-ան
Տապանաքար Մեհրաբի	հվ կողմում
Տապանաքար Հուռումի	եկեղեցուց 40 մ հվ-ան
Տապանաքար Սարգսի	եկեղեցուց 25 մ ան

հուշարձան	հավելյալ նշումներ
Տապանաքար Խամբարի	եկեղեցուց 30 մ աե
Տապանաքար Նարինի	եկեղեցուց 8 մ հվ
Տապանաքար Ավանեաի	եկեղեցուց 25 մ աե
Տապանաքար Միրզայի	եկեղեցուց 40 մ հվ-ամ
Տապանաքար Մարգարիտի	եկեղեցուց 50 մ հվ-աե
Տապանաքար Կիրակոսի	հվ կողմում
Տապանաքար Խանումի	եկեղեցուց 50 մ հվ-աե
Տապանաքար	եկեղեցուց 10 մ աե, արձանագիր
Տապանաքար Եղիսաբեթի	եկեղեցուց 15 մ աե
Տապանաքար Մարեանի	աե եզրին
Տապանաքար Հերաթի	եկեղեցուց 10 մ հվ
Տապանաքար	եկեղեցուց 50 մ աե
Տապանաքար Յոհանի	եկեղեցուց 10 մ հվ
Տապանաքար Թասալի	աե կողմում
Տապանաքար Հուռումսիմի	եկեղեցուց 40 մ հվ-աե
Տապանաքար Տուռումի	եկեղեցուց 1 մ աե
Տապանաքար Բախտագյուլի	եկեղեցուց 10 մ հվ
Տապանաքար Հունանի	եկեղեցուց 40 մ աե
Տապանաքար	հվ-աե կողմում
Դամբարանադաշտ	«Սև սար» կոչվող բարձունքի ստորոտին
Ժայռապատկերներ	«Յանրդ» ամառային արոտատեղիի տարածքում
Խաչքար	ճանապարհից ձախ, «Կաթան պալ» սրբատեղիում, վերնամասը`

հուշարձան	հավելյալ նշումներ
	չի պահպանվել
Կամուրջ	Մելիմի քարավանատուն տանող ճանապարհին
Կամուրջ	Մելիմի քարավանատուն տանող ճանապարհին
Զիթհան	Ավետիք Նազիկյանի հողամասում
Մատուռ Թուխ Մանուկ (Մամաս)	հվ եզրին
Խաչքար	բեմին, ստորին մասը չի պահպանվել
Խաչքար	բեմին, ստորին աջ և ձախ անկյունները կտրված
Խաչքար	բեմին, ստորին ձախ անկյունը՝ կտրված
Խաչքար	բեմին, վերին ձախ անկյունը՝ կտրված
Մենհիր	Ռոբերտ Հարությունյանի հողամասում
Պարիսպ	
Զրադաց	«Կազովնու հովիկներ» վայրից ամ, Ագրիճա գետի աջ ափին
Զրադաց Պողոսի	գետի աջ ափին, Ալբերդ ամրոցի դիմաց
Զրադացների համակարգ	Կզնուտ գետի աջ ափին
Կամուրջ	

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Արտադրամասի շահագործումը իրականացնելիս պետք է պահպանել պետական նորմերը, կանոնները, ստանդարտները:

Արտադրամասի տարածքում պահպանել հակահրդեհային անվտանգության և տեխնիկական անվտանգության կողմից սահմանված պայմանները: Արտադրամասի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

2.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- հանքանյութի վերամշակման ժամանակ փոշու հնարավոր արտանետումներով,
- հանքանյութի վերամշակման ժամանակ առաջացող թափոններով:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

2.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հանքանյութի վերամշակման գործընթացում:

2.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

2.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված է՝

- հանքանյութի վերամշակումը իրականացնել ջրային միջավայրում,
- պարբերաբար ստուգել գործընթացը և անհրաժեշտության դեպքում ուժեղացնել ջրի հոսքը:

2.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Փաշեգոյացումը կանխելու նպատակով օգտագործվող ջուրը շրջանառու է,
- Անձրևվների և ձնհալի ժամանակ առաջացող հոսքաջրերը կուղորդվեն շրջանառու ջրի ավազան:
- Շրջանառու ջրի ավազանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի մշակման գործընթացում, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի ավազանից կկուտակվի և կվաճառվի ճանապարհաշինարարական կազմակերպություններին:

2.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի ակնկալվում քանի որ տարածքը կառուցապատված և բարեկարգված է:

2.3.4. Թափոնների կառավարում

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա ընկերության գործունեության ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան 350կգ, հանքանյութի վերամշակման թափոն` 50 խմ ծավալով: Առաջացող կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից, իսկ հանքանյութի վերամշակման թափոնը կվաճառվի ճանապարհաշինարարական ընկերություններին (թափոնի անձնագիրը սահմանված կարգով կներկայացվի ՇՄ նախարարության համաձայնեցմանը):

2.3.5. Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Գործունեության ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը արտադրական հարթակը հազեցվում է հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

2.3.5. Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- Գործունեությունը իրականացնել ցերեկային ժամերին,
- սարքերը շահագործել նորմալ տեխնիկական վիճակում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Արտադրամասի գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2 անգամ;
3. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աշխատակազմի հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 500000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, տարի/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեզոյացումը կանխելու նպատակով	100000	100000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ	12x25000	300000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	4x25000	100000
Արտադրամասի տարեկան գործունեության ընթացքում		500000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Արտադրության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Ձեռնարկողը պատասխանատու է աշխատանքները ապահով և կարգապահ իրականացնելու համար՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Արտադրամասի տարածքում համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Արտադրամասի գործունեություն	Օդի որակ	(a) Հանքանյութի վերամշակումը իրականացնել ջրային շթի տակ՝ փոշեգոյացումը կանխելու համար (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով
	Աղմուկ	(a) Աշխատանքները իրականացնել ցերեկային ժամերին (b) Մշակման հաստոցները օգտագործել սարքին վիճակում
	Թափոնների կառավարում	(a) Արտադրական գործունեության ընթացքում առաջացող թափոնները հավաքել անջրթափանց մակերես ունեցող հարթակի վրա այնուհետև վաճառելու համար (b) աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Խմելու-կենցաղային նպատակներով ջուրը բերովի է (b) Մեպտիկ հորից հոսքաջրերը պարբերաբար հեռացնել (c) Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի շրջանառու ջրի համակարգում տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հավաքվի և կվաճառվի ճանապարհաշինարարական ընկերություններին:
Արտակարգ իրավիճակների	Աշխատանքային գործունեության	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի արտադրամասում;

կառավարում	ընթացքում արտակարգ իրավիճակների կառավարում	<ul style="list-style-type: none"> - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները
------------	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Հանքանյութի մատակարարում	Հանքանյութի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Արտադրական տեխնիկայի շահագործում տեղամասում	Իրականացնել սարքին վիճակում լինելու վերաբերյալ հսկողություն	Արտադրամասի տարածք	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում արտադրամասի տարածքում	Արտադրամասի տարածք	Արտաքին զննում	Գործունեության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Արտադրամասի տարածք	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁՆԵՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՏԵՆՍԻ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԲՐՏՄԵՆԻՑ ԲԱԳՎԱԾՔ ամ 2020-05-20

«ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 76.110.1127355

Հիմնադրման տարի 2020

Գրանցման ամսաթիվ 2020-05-20

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 52147779

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 08423381

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ասլախովադրի ծածկագիր) 15117355

Էլ. փոստ

Կայք

Գտնվելու վայրը

Հասցե 5-րդ փ. / Տ / 174 ԳԵՂՈՎԻՏ 1405 ԳԵՂՈՎԻՏ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս 098835444

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տեղապետ

Անուն Ազգանուն ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿԻ

Անձնագրային տվյալներ 007814981 2016-04-13 043

Հասցե 5 փ. / Տ / 174 ԳԵՂՈՎԻՏ 1405 ԳԵՂՈՎԻՏ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ



Պատվարկարկման համար՝ 007814981 արվ. 043 ի կողմից

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 50000

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով
ՎԱՐՂԱՆ ՎԱՐՂԱՆՅԱՆ ԱՐՏԱԿԻ Անձնագիր N/հ 007814981 արվ. 043 ի կողմից Հասցե՝ 5 Փ. / Տ / 174 ԳԵՂՈՎԻՏ 1405 ԳԵՂՈՎԻՏ ԳԵՂԱՌՔՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ	2020-05-20	100 %	50000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
------------------	-----------------

Քաղվածքը տրամադրող՝

Լուսինե Սողոմոնյան
Ստորագրություն

Լուսինե Սողոմոնյան Մերուժանի

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝

2020-05-20



ք. Երևան

27.08.2021թ.

«Յանա Վարդանյան» ՍՊԸ

արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի անունը (անվանումը).

ի դեմս

Վ. Վարդանյանի

այսուհետ՝ «Պատվիրատու», որը գործում է

ազգանունը, անունը, պաշտոնը

/կանոնադրության, լիազորագրի/ հիման վրա, մի կողմից, և Արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վ. Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող), ով գործում է ՀՀ օրենսդրության և կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է փորձաքննություն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնել և տալ փորձագիտական եզրակացություն սույն ենթակետի աղյուսակին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ Ծառայության համար:

№	Օբյեկտի անվանումը	Օբյեկտի գտնվելու վայրը	Փորձաքննության անվանումը	ԱՊՕ-ի N	Տվյալներ	Գործ.N	Քանակը	Արժեքը ընդամենը	Փորձագետ
1	Էլեկտրական տալ	Գեղարքունիքի մարզ, գ.Գեղհովիտ	Տեխանվտանգ	8/1-1893	3 տ	64000	1	27500	Սևակ Դավուդյան
2	Կամրջակայանի կրունկ	Գեղարքունիքի մարզ, գ.Գեղհովիտ	Վկայագիր				1	25000	Սևակ Դավուդյան
3	Կամրջակայանի կրունկ	Գեղարքունիքի մարզ, գ.Գեղհովիտ	Տեխանվտանգ		3 տ	2442	1	61900	Սևակ Դավուդյան
	Ընդամենը						3	114400	

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունը մատուցել սույն պայմանագրի 1-ին կետի աղյուսակում նշված փորձագետի (փորձագետների) միջոցով՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը Կատարողի հաշվարկային հաշվին մուտքագրվելուց հետո՝ « 15 » աշխատանքային օրվա ընթացքում:

2.1.2. Ծառայության մատուցման ավարտից հետո եզրակացության մեկ օրինակը հանձնել Պատվիրատուին:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Ծառայության պատշաճ մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել փաստաթղթեր, փորձաքննության համար անհրաժեշտ այլ տվյալներ և միջոցներ:

2.2.2. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում Պատվիրատուի հետ նախօրոք համաձայնեցված ժամանակ անարգել մուտք գործել փորձաքննության իրականացման տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ և այլ օբյեկտներ:

2.2.3. Պատվիրատուին տրամադրել միջոցառումների ծրագիր, որի կատարումը չի կարող գերազանցել երեք ամիսը:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Ծառայության մատուցման համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ծառայության գումարը:

2.3.2. Ծառայության մատուցման ընթացքում Կատարողին (սույն պայմանագրի 1-ին կետի աղյուսակով նախատեսված փորձագետին) տրամադրել Ծառայության պատշաճ մատուցման համար անհրաժեշտ և պահանջվող փաստաթղթերը, այդ թվում անհրաժեշտ այլ տվյալներ և միջոցներ:

2.3.3. Ծառայության մատուցման ընթացքում փորձաքննությունն իրականացնող փորձագետին (փորձագետներին) ապահովել անհատական պաշտպանության միջոցներով և Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

2.3.4. Ծառայության մատուցման ընթացքում Կատարողի կամ սույն պայմանագրով նախատեսված փորձագետի հետ նախօրոք համաձայնեցված ժամանակ Փորձագետին թույլատրել անարգել մուտք գործել փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ, այլ օբյեկտներ:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ծառայության մատուցման ընթացքում Ծառայության մատուցմանը մասնակից դարձնել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությանը՝ վերջիններիս ապահովելով անհատական պաշտպանության միջոցներով:

2.4.2. Փորձագետից պահանջել իրեն տրամադրել փորձագիտական եզրակացության օրինակը:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրի գինը կազմում է՝ 114400000 ՀՀ Լ (կարգաչափ վարմանը կարգաչափ չափը կարգաչափ) դրամ, այդ թվում Ծառայության մատուցման արժեքը՝ 95333 դրամ, ԱԱՀ-ն՝ 19067 դրամ:

*Եթե Կատարողին ներկայացվում են Պատվիրատուին ԱԱՀ-ից ազատված լինելու վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր, ապա ԱԱՀ-ի գումարը ենթակա չէ վճարման:

3.2. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը սույն պայմանագիրը կնքելուց հետո երեք ամսվա ընթացքում չվճարելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված, իսկ Պատվիրատուի գործողությունները համարվում են պայմանագրային պարտավորություններից հրաժարում:

4.2. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվող մյուս կողմից պահանջելու վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված գնի 30 տոկոսը:

4.3. Կատարողի կողմից Ծառայությունը չմատուցելը չի կարող համարվել պայմանագրային պարտավորություններից հրաժարում, եթե դա պայմանավորված է Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է կողմերի միջև կնքված համաձայնագրի միջոցով:

7.2. Սույն Պայմանագիրը կնքված է մեկ տարի ժամկետով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կատարող

Զավեն Գևորգյան (1971)
Սահմանափակված պատասխանատվությամբ ընկերության տնօրեն

ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան 109/8
ՀՎՀՀ 01556354

Գեորգի Զուրաբյան (1980)
Հասցե գրանցելու վանկը/հաշվառման
08423301
(ՀՎՀՀ)/անձնագրային տվյալներ

ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ. 900018003724

Բանկային վավերապայմանները

Տնօրենի Օրբելյան Վ. Գևորգյան

1/ 11 / Վահրամյան / Վ. Գևորգյան
(պաշտոնը, /ստորագրությունը/ (շտաբ, ազգանուն)

Կ.Տ

Կ.Տ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 30 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Գեղիովիտ հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի Մարտունի սպասարկման գրասենյակի առուվաճառք
15.02.2019թ. պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-027-1014-0004

Մակերեսի չափը (հա)՝ 0.45

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արտավայր

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 30122019-05-0028, գաղտնաբառ՝ XQ6BYNZ4MBF3

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարվել է 20/02/2019 թվականին, վկայական 20022019-05-0033:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հրանտ Ղուկասյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 30122019-05-0028, գաղտնաբառ՝ XQ6BVNZ4MBF3

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

